Հաստատված է «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ

Գործադիր տնօրենի 22/06/2026թ.

թիվ 336 որոշմամբ

Ուժի մեջ է 22/06/2026թ-ից

Գործադիր տնօրեն՝ Խ. Ներկարարյան

Անձնակազմի հավաքագրման ընթացքում անձնական տվյալների մշակման գործընթաց

ԵՐԵՎԱՆ 2026

1. Նպատակը

Անձնակազմի հավաքագրման ընթացքում անձնական տվյալների մշակման գործընթացը (այսուհետ՝ Գործընթաց) սահմանում է, թե ինչպես է «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն), որպես անձնական տվյալների վերահսկիչ, մշակում Ձեր անձնական տվյալները հավաքագրման գործընթացի ընթացքում՝ երբ Դուք դիմում եք թափուր աշխատատեղի համար: Սույն Գործընթացը նաև սահմանում է տեղեկատվություն Ձեր իրավունքների և Ձեր Անձնական տվյալների մշակման պայմանների վերաբերյալ:

Ընկերությունը հանդիսանում է Eleving Group-ի մի մաս (միջազգային ֆինտեխ կազմակերպություն):

2. Ի՞նչ անձնական տվյալներ է Ընկերությունը մշակում և ինչու

Ընկերությունը կարող է մշակել Ձեր անձնական տվյալները հավաքագրման գործընթացի տարբեր փուլերում՝ գնահատելու Ձեր դիմումը և համապատասխանությունը տվյալ պաշտոնին:

Կախված պաշտոնից՝ որոշ դեպքերում կարող են պահանջվել լրացուցիչ տվյալներ:

2.1 Դիմումի գնահատում

Հավաքագրման գործընթացում մշակվում են հետևյալ տվյալները՝

- Անուն, ազգանուն,
- Կոնտակտային տվյալներ,
- Ինքնակենսագրականում, դիմումում կամ ուղեկցող նամակում ներառված տվյալներ,
- Հմտությունների, փորձի, կրթության և որակավորման վերաբերյալ տեղեկատվություն,
- LinkedIn կամ այլ հրապարակային աղբյուրներում հասանելի տվյալներ,
- Հարցազրույցի, գործնական առաջադրանքի կամ հաղորդակցության ընթացքում տրամադրված ցանկացած այլ տեղեկատվություն:

Տվյալների մշակումը իրականացվում է Ընկերության օրինական շահերի հիման վրա, ինչպես նաև Ձեր նախաձեռնությամբ նախապայմանագրային հարաբերությունների հաստատման նպատակով:

2.2 Անձնական տվյալների հատուկ կատեգորիաներ

Ընկերությունը չի պահանջում անձնական տվյալների հատուկ կատեգորիաներ (այդ թվում՝ ռասայական, ազգային պատկանելություն կամ էթնիկ ծագում, քաղաքական հայացքներ, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներ, արհմիության անդամակցություն, գենետիկական կամ կենսաչափական տվյալներ, առողջական տվյալներ, սեռական կյանքին կամ կողմնորոշմանը վերաբերող տվյալներ):

Եթե Դուք կամավոր կերպով տրամադրեք նման տվյալներ, դրանք չեն օգտագործվի հավաքագրման գործընթացում և կմշակվեն սույն Գործընթացի համաձայն:

2.3 Երաշխավոր անձինք

Եթե Դուք տրամադրել եք երաշխավոր անձանց տվյալներ, Ընկերությունը կարող է կապ հաստատել բացառապես Ձեր կողմից նշված անձանց հետ՝ Ձեր համապատասխանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Այդ նպատակով մշակվում են՝

- երաշխավոր անձի անուն, ազգանուն,
- կոնտակտային տվյալներ,
- Ձեր վերաբերյալ տրամադրված տեղեկատվություն:

Տվյալների մշակումը հիմնված է Ձեր և համապատասխան երաշխավոր անձի համաձայնության վրա:

2.4 Իրավական շահերի պաշտպանություն

Ընկերությունը կարող է մշակել հավաքագրման գործընթացում ստացված Ձեր Անձնական տվյալները՝

- Իր օրինական իրավունքները պաշտպանելու,
- Իրավական գործընթացներին մասնակցելու,
- Որպես գործատու իր իրավունքներն իրականացնելու նպատակով:

3. Մասնագիտական հեղինակության գնահատում

Համաձայն գործող օրենսդրության՝ որոշակի պաշտոններ չեն կարող զբաղեցնել նախկինում քրեական դատվածություն ունեցող անձինք, հետևաբար, նմանատիպ պաշտոնի համար դիմելիս, Ընկերությունը կարող է խնդրել Ձեզ տրամադրել Ձեր քրեական դատվածության վերաբերյալ մանրամասներ և իրականացնել Ձեր մասնագիտական հեղինակության խորը գնահատում: Նման գնահատման ընթացքում կարող է մշակվել տեղեկատվություն, որը բացահայտում է.

- արդյոք Ձեր արարքը կամ անգործությունը հանգեցրել է ֆինանսական վերահսկողության մարմնի որոշման պատճառով սնանկության կամ այլ հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչմանը,
- արդյոք Դուք դատապարտվել եք քրեական հանցագործության համար և Ձեր քրեական անցյալը չի ջնջվել քրեական ռեգիստրից,
- արդյոք իրավական կամ դատարանի որոշմամբ արգելված է Ձեզ բիզնեսով զբաղվել, որոշակի պաշտոն զբաղեցնել, գործունեություն ծավալել որոշակի ոլորտում կամ զբաղվել որոշակի բիզնեսով:

Ընկերությունը կմշակի այս տեղեկատվությունը՝ ապահովելու օրենսդրությամբ սահմանված որոշակի պաշտոնների նկատմամբ պահանջները և ապահովելու Ընկերության շահերի և գործունեության պաշտպանությունը: Ընկերությունը կարող է ստանալ տեղեկատվությունը Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերից և տվյալներից, ինչպես նաև կատարելով Ձեր մասնագիտական հեղինակության վերաբերյալ գնահատում, ներառյալ՝ օգտագործելով հանրությանը հասանելի տվյալներ և տեղեկատվության այլ աղբյուրներ:

Հաշվի առնելով, որ այս տեղեկատվությունը համարվում է բարձր զգայունության անձնական տվյալներ՝ մշակումը կիրականացվի՝ ապահովելով տվյալների անվտանգությունը և սահմանափակ հասանելիությունը:

4. Ո՞վ կարող է ստանալ Ձեր Անձնական տվյալները

Անհրաժեշտությունից ելնելով՝ հավաքագրման գործընթացում Ընկերությունը կարող է Ձեր տվյալները փոխանցել այլ իրավաբանական անձանց, որոնք Eleving Group-ի մաս են կազմում, օրինակ՝ եթե այդ կազմակերպությունները օգնություն են ցուցաբերում հավաքագրման գործընթացում կամ, եթե տվյալ պաշտոնը վերաբերվում է Eleving Group-ի

մաս կազմող ընկերությանը: Եթե դուք ընդհանուր հայտ եք ներկայացրել նման թափուր աշխատատեղի համար, ապա Ձեր տվյալները կարող են օգտագործվել Eleving Group-ի համապատասխան ընկերության այլ հավաքագրման գործընթացներում, որն ունի Ձեզ համար առավել հարմար թափուր աշխատատեղ:

Ձեր անձնական տվյալները կարող են տրամադրվել երրորդ անձանց, ովքեր ծառայություններ են մատուցում հավաքագրման գործընթացում (օրինակ՝ հոսթինգ և տվյալների պահպանման ծառայություններ, HR գործիքներ, իրավաբանական, SS և այլ խորհրդատուներ): Ծառայությունների մատակարարները կարող են ստանալ միայն նվազագույն պահանջվող անձնական տվյալներ և միայն անհրաժեշտության դեպքում: Ընկերությունը Ձեր անձնական տվյալները կկիսվի միայն այնպիսի ծառայություններ մատուցողների հետ, ովքեր պարտավորվել են պահպանել գաղտնիության պահանջները, ինչպես նաև տվյալների պաշտպանության գործող օրենքներով և համագործակցության պայմանագրերով սահմանված պարտավորությունները:

Եթե ծառայություններ մատուցողներից որևէ մեկը գտնվում է Եվրոպական միությունից դուրս կամ առկա են այլ օրինական հիմքեր՝ անհրաժեշտ տվյալները փոխանցել Եվրոպական միությունից դուրս, ապա նման դեպքերում անձնական տվյալները կփոխանցվեն միայն համապատասխան երաշխիքների ապահովման պայմաններում և Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի(GDPR) պահանջներին համապատասխան:

Եթե հավաքագրման գործընթացի հետ կապված կան բողոքներ կամ Ընկերությունը պետք է պաշտպանի իր օրինական իրավունքները, կարող է նաև տեղեկատվություն տրամադրել համապատասխան պետական մարմիններին՝ համաձայն գործող օրենսդրության:

5. Անձնական տվյալների պահպանման ժամկետը

Այն դեպքում, երբ նշել եք, որ հետաքրքրված եք այլ համապատասխան թափուր աշխատատեղերով կամ ներկայացրել եք ընդհանուր հայտ, ապա Ձեր Անձնական տվյալները կպահպանվեն 2 տարի: Այս ժամանակահատվածից հետո Ընկերությունը կջնջի կամ անանուն կդարձնի Ձեր տվյալները և կօգտագործի դրանք միայն վիճակագրական նպատակներով:

Եթե նշել եք, որ Ձեզ չեն հետաքրքրում այլ հարմար պաշտոններ, կամ չեղարկել եք Ձեր համաձայնությունը, Ընկերությունը կջնջի կամ անանուն կդարձնի Ձեր Անձնական տվյալները տվյալ հավաքագրման գործընթացի ավարտից 4 ամիս անց:

Ընկերությունը կարող է շարունակել պահպանել Ձեր Անձնական տվյալների պատճենները, երբ ողջամտորեն անհրաժեշտ է իր իրավական շահերը ներկայացնելու, վեճերը լուծելու և/կամ իր օրինական շահերը պաշտպանելու համար:

6. Ձեր իրավունքները

Որպես տվյալների սուբյեկտ՝ Դուք ունեք որոշակի իրավունքներ՝ կապված Ձեր Անձնական տվյալների մշակման հետ:

Դուք իրավունք ունեք պահանջելու հասանելիություն Ձեր անձնական տվյալներին: Եթե կարծում եք, որ Ձեր մասին Ընկերության ունեցած տվյալները հնացած են, սխալ կամ թերի, Դուք իրավունք ունեք դիմելու դրանք ուղղելու կամ փոփոխելու: Դուք իրավունք ունեք ստանալու Ձեր անձնական տվյալները կառուցվածքային ձևաչափով և փոխանցելու այլ

տվյալների վերահսկողի: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում Դուք իրավունք ունեք պահանջելու տվյալների մշակման սահմանափակում:

Եթե Ձեր անձնական տվյալները մշակվում են Ընկերության օրինական շահերի հիման վրա, Դուք իրավունք ունեք առարկելու նման մշակմանը: Նման առարկություն ստանալու դեպքում, Ընկերությունը այլևս չի մշակի Ձեր անձնական տվյալները, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օրինական հիմքեր, որոնք գերակայում են տվյալների սուբյեկտի շահերի, իրավունքների և ազատությունների կամ իրավական պահանջներ ստեղծելու, իրականացնելու կամ պաշտպանելու համար:

Դուք իրավունք ունեք հետ վերցնել տվյալների մշակման համար Ձեր համաձայնությունը: Համաձայնության չեղարկումը չի ազդի մինչ այդ պահը համաձայնության հիման վրա իրականացված մշակման օրինականության վրա:

Դուք կարող եք պահանջել Ձեր անձնական տվյալների ջնջում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընկերությունը չի ջնջի այն տվյալները, որոնք պարտավոր է պահպանել գործող օրենքներին համապատասխան կամ որոնք անհրաժեշտ են իրավական պահանջների իրականացման կամ պաշտպանության համար:

Դուք կարող եք օգտվել Ձեր իրավունքներից՝ Ձեր հարցումը գրավոր ներկայացնելով Ընկերության էլեկտրոնային հասցեին: Նման հարցումները կգնահատվեն գործող օրենսդրությանը համապատասխան և Ընկերությունը կպատասխանի դրանց օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընկերությունը պետք է ստուգի Ձեր ինքնությունը, նախքան որևէ տեղեկություն տրամադրելը, հետևաբար, կարող է պահանջվել լրացուցիչ տվյալների տրամադրում:

Ավելին, եթե կարծում եք, որ Ձեր անձնական տվյալները մշակվել են անօրինական կերպով, Դուք իրավունք ունեք բողոք ներկայացնելու անձնական տվյալների պաշտպանության իրավասու վերահսկող մարմնին:

7. Եզրափակիչ դրույթներ

Ընկերությունը կարող է պարբերաբար փոփոխել սույն Գործընթացը: Թարմացված տարբերակը կհրապարակվի Ընկերության պաշտոնական կայքում:

Սույն Գործընթացն ուժի մեջ է մտնում 22/06/2026 թվականից:

Սույն Գործընթացի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ Գլխավոր տնօրեն՝ Հ. Մանուկյանի 21/04/2023թ. թիվ 173 որոշմամբ հաստատված Գործընթացը:

Հարցերի դեպքում կարող եք դիմել՝ hr@mogo.am էլ. հասցեին: